



LOS ANGELES— In the spirit of becoming an all-inclusive community based youth organization, last week, Homenetmen Western USA announced its plans for expansion to include youth and adults with special needs in its Navasartian Games and Festival tournaments.

“It is our solemn pledge to embrace and create a space for our special needs children and adults who are an integral, yet often overlooked part of our community. As we celebrate our organization’s centennial anniversary, we recommit to our mission to elevate ourselves by elevating others. Expanding the Navasartian Games to include those with special needs is one of many ways which serves that mission,” stated Homenetmen Western USA Board Chair, Manuel Marselian.

Historically, opportunities for youth and adults to actively participate in events such as the Navasartians have unfortunately been scarce. As a result, the organization found it critical to set an example and create opportunities for special athletes of all ages to join the Homenetmen family, while providing them with the necessary accommodations which will enable them to compete in its events. The organization plans to train coaches and staff members to specifically meet the unique needs of participants with disabilities.

The expansion also creates opportunities for greater awareness about youth and adults with special needs.

Navasartian preliminary games are set for May-June, while the finals and closing will take place July 3-7. The event will draw over 50,000 spectators and 4,000 athletes. Youth and adults athletes of all abilities interested in participating are encouraged to contact Homenetmen Western USA at specialolympics@homenetmen.org to sign up.

To learn more about Homenetmen Western USA visit Homenetmen.net. The Armenian General Athletic Union and Scouts, referred to as Homenetmen, is a 501 (C)3 non-profit organization founded in 1918, which has to date served over 800,000 youth in five continents. Homenetmen Western Region currently has 19 chapters. It is the largest Armenian athletic and scouting organization in the United States.



Լուս Անճելըս.- Իբրեւ համընդգրկուն եւ համագաղութային երիտասարդական կազմակերպություն, Արեւմտեան Ամերիկայի ՀՄԸՄԻ Շրջ. վարչությունը յայտարարեց, թէ Նաւասարդեան մարզախաղերը առիթը պիտի ընծայեն յատուկ կարիքներ ունեցող մարզիկներու, որպէսզի իրենց մասնակցութիւնը կարենան բերել զանազան մարզախաղերու միջոցաւ:

«Մեր գրաւականն է հանգիստ միջավայր ստեղծել յատուկ կարիքներ ունեցող մեր երեխաներուն եւ մարզիկներուն համար, որոնք մեր գաղութի անբաժանելի մասը կը կազմեն: Մեր կազմակերպութեան հիմնադրման 100ամեակի շեմին, մենք կը վերանորոգենք մեր ուխտը՝ կառչած մնալով ՀՄԸՄԻ «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանին: Նաւասարդեան մարզախաղերու այս ընդլայնումը ՀՄԸՄԻ առաքելութիւնը հաստատող քայլերէն մէկն է», ըսաւ ՀՄԸՄԻ Շրջ. վարչութեան ատենապետ Մանուէլ Մարսէլեան:

Դժբախտաբար, այսպիսի առիթները մեր երիտասարդներուն համար պատմականօրէն եղած են հազուագիւտ: Այդ իսկ պատճառով, մեր կազմակերպութիւնը անհրաժեշտ նկատեց այսպիսի նախաձեռնութիւն մը կեանքի կոչել, օրինակ դառնալով յատուկ կարիքներ ունեցող մարզիկներուն, որ անդամակցին ՀՄԸՄԻն:

Կազմակերպութիւնը իր բոլոր մարզիչները, պատասխանատուներն ու պաշտօնեաները պիտի մարզէ, որպէսզի կարենան այս մարզիկներուն իւրայատուկ կարիքները ճիշդ կերպով հոգալ:

Նաւասարդեան մարզախաղերու այս ընդլայնումը նաեւ կը շեշտէ յատուկ կարիքներ ունեցող անձերը մեր առօրեայ կեանքէն ներս ներառելը:

Նաւասարդեան նախնական խաղերը տեղի պիտի ունենան Մայիսէն Յունիս, իսկ վերջին հանգրուանի խաղերն ու փակումը՝ Յուլիս 3էն 7: Նաւասարդեան Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 4000 մարզիկներ 50,000 հանդիսատեսներու ներկայութեամբ:

Այն մարզիկները, որոնք կը փափաքին մասնակցիլ Նաւասարդեան մարզախաղերուն, կրնան դիմել specialolympics@homenetmen.net հասցէին:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար այցելել ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու կայքէջը՝ www.homenetmen.net, Facebook-ի էջը՝ www.facebook.com/HomenetmenUSAWR, Instagram-ի էջը՝ [@Homenetmen_Western_USA](https://www.instagram.com/Homenetmen_Western_USA) #WeAre100 hashtag-ը օգտագործելով:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ ՀՄԸՄը, 501 (C)3 ոչ-շահաբեր կազմակերպութիւն մըն է, որ հիմնուած է 1918ին ու մինչեւ օրս դաստիարակած աւելի քան 800,000 պատանիներ աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ: ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը ունի 17 մասնաճիւղեր եւ 2 միաւորներ: ՀՄԸՄը դարձած է Միացեալ Նահանգներու մեծագոյն հայկական մարզական եւ սկաուտական կազմակերպութիւնը: